

## ԴԱԿՐԻՈԼԻԹԻԱԶ. ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԴԵՊԵԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ Ղարաբեշիշյան Ա.Ֆ.

Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն, Երևան, Հայաստան  
Երևանի պետ. բժշկական համալսարանի ակնաբուժության ամբիոն, Երևան, Հայաստան

Արցունքային քարերը կամ դակրիոլիտը հանդիսանում են հազվագյուտ պաթոլոգիա և հանդիպում են դակրիոցիստոռինոստոմիա վիրահատության ժամանակ մինչև 7% դեպքում: Արցունքային քարերը պատճառ են հանդիսանում արցունքաթափային խողովակի բլոկադայի: Չնայած գոյություն ունեցող բազմաթիվ հետազոտությունների, դրանց առաջացման պատճառը դեռևս անհայտ է:

Արցունքային քարերը կազմված են մուցինից, լիպիդներից և բորբոքային բջիջներից: Հիստոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ արցունքային քարերը իրենցից ներկայացնում են ամորֆ ագելուլյար օրգանական նյութեր, և հիմնականում կազմված են կալցիումի դեպոզիտներից:

Ինչպես նշվեց, արցունքային քարերը արցունքատար համակարգի կուտակումներ են: Դակրիոլիտի հետևանքով հիվանդների մոտ կարող է առաջանալ անցողիկ արցունքահոսություն, որը կարող է ուղեկցվել արցունքատար ուղիների բորբոքումով:

Արցունքային քարերը հիմնականում հանդիպում են քրոնիկ բորբոքված արցունքապարկերում, որոնցում ակտիվացած է մուցինի արտադրությունը: Դակրիոլիտի հետևանքով առաջանում է արցունքաթափային խողովակի լրիվ կամ մասնակի օբստրուկցիա:

Արցունքային քարերը կարող են լինել փոքր փափուկ գրանուլների տեսքով կամ կարող են լինել մեծ և գրավել ամբողջ արցունքապարկը: Դակրիոցիստոգրաֆիայի ժամանակ արցունքային քարերը հայտնաբերվում են լցման դեֆեկտի ձևով:

Մեր աշխատանքի նպատակն է ներկայացնել արցունքային քարերի մեկ կլինիկական դեպք: Աշխատանքում մենք ներկայացնում ենք դակրիոլիտերի ներվիրահատական նկարագիրը, դրանց հիստոլոգիական կառուցվածքը և բուժումը:

Ներկայացված աշխատանքը հանդիսանում է Հայաստանում դակրիոլիտի դեպքի առաջին կլինիկական նկարագիրը:

Սուր դակրիոցիստիտով տառապող հիվանդի մոտ դակրիոլիտերի հայտնաբերումը հանդիսանում է հազվագյուտ դեպք: Այս կլինիկական դեպքը չունի իր նախադրյալը Հայաստանում և դրանով իսկ հանդիսանում է ներկայացնելու տեսակետից խիստ արժեքավոր: Մեր ներկայացրած հիվանդը ենթարկվել է արդյունավետ բուժման դակրիոցիստոռինոստոմիայի եղանակով:

Ներկայացված կլինիկական դեպքը արժեքավոր է ոչ միայն հազվագյուտ պաթոլոգիայի կլինիկական նկարագրության տեսակետից: Նկարագրված դեպքի միջոցով մենք նաև նպատակ ունենք զգուշացնել ակնաբույժներին ձգձգվող կլինիկայով սուր դակրիոցիստիտով տառապող հիվանդների մոտ արցունքային քարերի հնարավոր առկայության մասին, որոնք ունեն կայունություն անտիբիոտիկային բուժման նկատմամբ: